

Հայտարարություն

1-ին և 2-րդ փուլեր

Դիմորդը ոչ մի հարցով ԵՊՀ ընդունող հանձնաժողով չի այցելում: ԵՊՀ դիմորդները դիմում-հայտի լրացման հետ կապված խորհրդատվություն ստանալու են հեռախոսազրույցի միջոցով, զանգահարելով **060-710-777** հեռախոսահամարով: Նախատեսված է նաև առանձին էլեկտրոնային փոստի հասցե՝ **dimord@ysu.am**, որի միջոցով ԵՊՀ դիմորդը կարող է իր հարցերն ուղղել գրավոր եղանակով: Նշված կապի միջոցները գործում են միայն դիմում-հայտերի ընդունման համար ստորև նշված ժամկետներում և սահմանված աշխատանքային օրերին ու ժամերին:

1-ին փուլով (ընդունելության կարգի 24-րդ կետ) դիմող դիմորդներն ընդունելության քննությունների և մասնագիտության հայտագրման դիմում-հայտը **dimord.am** կայքի միջոցով ԳԹԿ են ուղարկում էլեկտրոնային (առցանց) եղանակով՝

ա/թ ապրիլի 15-ից մինչև մայիսի 10-ը ներառյալ, մայիսի 10-ին՝ մինչև ժամը 18:00:

2-րդ փուլով (ընդունելության կարգի 27-րդ կետ) դիմող դիմորդները՝

ա/թ հունիսի 26-ից մինչև հուլիսի 1-ը ներառյալ, հուլիսի 1-ին՝ մինչև ժամը 17:00: